

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «իրավունք ունի դադարեցնել անբարեխիղճ մրցակցությունը՝ դիմելով դատարան» բառերը փոխարինել «իրավունք ունի անբարեխիղճ մրցակցությունը դադարեցնելու պահանջով դիմելու դատարան» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5.1-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Պետական օժանդակությունը եւ իրավական ակտերի ու ստորագրված պայմանագրերի փորձաքննությունը»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.2-րդ հոդվածով՝

«Հոդված 16.2. Իրավական ակտերի ու ստորագրված պայմանագրերի փորձաքննությունը

Հանձնաժողովն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի եւ ստորագրված պայմանագրերի փորձաքննություն՝ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը դրանց համապատասխանության վերաբերյալ: Փորձաքննությունը կատարվում է Հանձնաժողովի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ յուրաքանչյուր ֆիզիկական ու իրավաբանական անձի կամ իրավական ակտն ընդունող կամ պայմանագիր ստորագրող մարմնի դիմումի համաձայն: Նման մարմինները կարող են փորձաքննություն իրականացնելու խնդրանքով դիմել Հանձնաժողովին մինչեւ իրավական ակտն ընդունելը կամ պայմանագիրն ստորագրելը՝ համապատասխան դրական եզրակացություն ստանալու նպատակով:

Հանձնաժողովն իրավական ակտի կամ պայմանագրի վերաբերյալ փորձաքննության արդյունքների մասին եզրակացությունը ներկայացնում է դիմումի ստացման օրվանից հետո՝ տասն օրվա ընթացքում»:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Նիստերին մասնակցելու շահագրգիռ անձանց իրավունքը երաշխավորվում է: Հանձնաժողովը քննարկումից առնվազն 5 օր առաջ ծանուցում է շահագրգիռ անձանց քննարկման վայրի, օրվա եւ ժամի մասին՝ նշելով քննարկման ենթակա հարցի բնույթն ու համառոտ նկարագրությունը: Ծանուցված շահագրգիռ անձանց չներկայանալը չի խոչընդոտում քննարկման անցկացմանը եւ որոշումների ընդունմանը: Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկայացնելու ապացույցներ, տալու բացատրություններ եւ բերելու փաստարկներ, առարկելու նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառման դեմ, ինչպես նաեւ ներկայացնելու միջնորդություններ:»:

Յոթված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Յեղիսակներ` [Յրայր Կարապետյան](#), [Արա Նռանյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Լիլիթ Գալստյան](#), [Միքայել Մանուկյան](#)